

norvikcredit

“Նորվիկ” ՈւՎԿ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2007 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար



Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Հաշվապահական հաշվեկշիռ	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8



KPMG Armenia cjsc
8 Hanrapetutian Street
Yerevan 0010
Republic of Armenia

Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ
Հանրապետության 8
Երևան 0010
Հայաստանի Հանրապետություն

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Նորվիկ» ՈՒՎԿ ՓԲԸ
Տնօրենների խորհրդին

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն

Մենք աուդիտի ենք ենթարկել «Նորվիկ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2007թ., հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ բացատրական ծանոթագրությունները: Սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ թեսային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2007թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքները ու դրամական միջոցների հոսքերը այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի:



	Ծնթգ.	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Գրանական միջոցներ և բանկային հաշիվներ	13	65,770	49,227
Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ներդրումներ	14	-	-
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	15	-	-
Գրանական շուկայում այլ տեղաբաշխումներ	16	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	17	13,259,012	3,193,918
Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	18	-	-
Այլ գործառնություններից ստացվելիք գումարներ	19	731	-
Վարձակալության գծով ստացվելիք գումարներ	20	-	-
Սինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	21	-	-
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում		-	-
Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում		-	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	22	64,932	41,922
Հետաձգված հարկային ակտիվ	22/1	-	8,167
Ստացվելիք տոկոսներ	23	98,252	14,330
Այլ ակտիվներ	24	27,844	4,901
Ընդամենը ակտիվներ		13,516,541	3,312,465
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	25	11,424,606	2,705,979
Գրանական շուկայից ստացված այլ փոխառություններ	26	-	-
Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	27	-	-
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ		110,516	5,300
Վարձակալության գծով վճարվելիք գումարներ		-	-
Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր	28	-	-
Պահուստներ		-	-
Վճարվելիք գումարներ	29	-	-
Հետաձգված հարկային պարտավորություն	22/1	20,037	-
Վճարվելիք տոկոսներ		-	-
Այլ պարտավորություններ	30	79,851	35,609
Ընդամենը պարտավորություններ		11,635,010	2,746,888
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	31	1,314,040	614,040
Պահուստներ		-	-
Գլխավոր պահուստ		-	-
Վերագնահատման պահուստներ	32	-	-
Կուտակված շահույթ/(վնաս)		567,491	(48,463)
Ընդամենը սեփական կապիտալ		1,881,531	565,577
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		13,516,541	3,312,465

Հաշվապահական հաշվեկշիռը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Նորվիկ» ՈՒՎԿ ՓԲԸ
 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթգ.	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից		(640,264)	(501,291)
<i>Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը</i>			
Ստացված տոկոսներ		1,459,683	27,538
Վճարված տոկոսներ		(522,564)	(11,136)
Կորուստների վերականգնում		-	-
Ստացված շահաբաժիններ		-	-
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ		88,557	22,228
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(133,261)	(39,860)
Վճարված հարկեր		(16,669)	602
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		875,746	(628)
Տեղաբաշխված միջոցների նվազում/(ավելացում)		(11,669,990)	(3,251,853)
Ներգրավված միջոցների ավելացում/(նվազում)		10,236,728	2,774,215
Առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի ներդրումների նվազում/(ավելացում)		-	-
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/(ավելացում)		-	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից		(82,748)	(23,025)
Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից		(34,067)	(48,092)
Սինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում/(ավելացում)		-	-
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում/(ավելացում)		-	-
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում/(ավելացում)		-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(34,067)	(48,092)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		-	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		-	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		700,000	614,040
Վճարված շահաբաժիններ		-	-
Բանկերից ստացված վարկերի ավելացում/(նվազում)		-	-
Ստացված այլ փոխառությունների ավելացում/(նվազում)		-	-
Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի ավելացում/(նվազում)		-	-
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		700,000	614,040
Ֆինանսական վարձակալության դիմաց վճարվելիք գումարների ավելացում/(նվազում)		-	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		-	-
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(9,126)	(15,430)
Դրամական միջոցների զուտ հոսք		16,543	49,227
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում		49,227	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	42	65,770	49,227

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Նորվիկ» ՈՒՎԿ ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կանոնադրական	Գլխավոր	Վերագնահատման	Կուտակված	Ընդամենը
	կապիտալ	պահուստ	պահուստ	շահույթ/ (վնաս)	հազ. դրամ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Մնացորդը առ 4 հուլիսի 2006թ.	-	-	-	-	-
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-
Վերահաշվարկված մնացորդ	-	-	-	-	-
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված շահույթ և վնաս	-	-	-	-	-
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	614,040	-	-	-	614,040
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-
Զուտ վնաս	-	-	-	(48,463)	(48,463)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2006թ.	614,040	-	-	(48,463)	565,577
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2006թ.	614,040	-	-	(48,463)	565,577
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-
Վերահաշվարկված մնացորդ	614,040	-	-	(48,463)	565,577
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված շահույթ և վնաս	-	-	-	-	-
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	700,000	-	-	-	700,000
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-
Զուտ շահույթ	-	-	-	615,954	615,954
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2007թ.	1,314,040	-	-	567,491	1,881,531

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Իրավական դաշտ

Հիմնական գործունեությունը

«Նորվիկ» ՈւՎԿ ՓԲԸ-ն («Ընկերություն») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն և վարկային կազմակերպության լիցենզիա է ստացել 2006թ. հուլիսի 4-ին: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Խանջյան փող. 41:

Ընկերության հիմնական գործունեությունը վարկերի տրամադրումն է: Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից («ՀՀ ԿԲ»): Ընկերության ակտիվների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում: Տարվա ընթացքում Ընկերության աշխատակիցների միջին թիվը կազմում էր 31 (2006թ-ին՝ 15):

Բաժնետերեր

Ընկերության միակ բաժնետերը Ռ-իգայում (Լատվիա) հիմնադրված «Նորվիկ Բանկ» ԲԸ-ն է: Ֆինանսական միջոցների մեծ մասն Ընկերությունը ստանում է բաժնետիրոջից: Արդյունքում Ընկերությունը տնտեսապես կախման մեջ է Բաժնետերից: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 41-ում:

Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Հետևաբար, Հայաստանի գործարար միջավայրում ծավալած գործունեությունը կապված է ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ներկայացված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության ֆինանսական դրության և գործառնությունների վրա տնտեսական իրավիճակի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող ակտերի համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Դեկլարությունը որպես Ընկերության ֆունկցիոնալ արժույթ է սահմանել դրամը, քանի որ վերջինս արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Սույն ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար դրամը հանդիսանում է մաս ներկայացման արժույթ:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Անընդհատություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքից ելնելով, որն ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող ակտերի համաձայն պատրաստելու համար՝ դեկլարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված առաջացած զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է արժեզրկման գծով պահուստներին վերաբերող ծանոթագրություն 17-ում:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով ներկայացված, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշտոնական փոխարժեքը կազմում էր 304.22 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները և թղթակից բանկերում տեղաբաշխված նուստրո հաշիվները:

Ֆինանսական գործիքներ

Ընկերության կողմից պահվող միակ ֆինանսական գործիքները տրամադրված փոխառությունները (վարկերը) և դեբիտորական պարտքերն են:

Տրամադրված փոխառությունները (վարկերը) և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք չունեն գնանշված շուկայական գին գործող շուկայում, բացառությամբ նրանց, որոնք տրամադրվում են ան-միջապես կամ կարճ ժամկետում վաճառելու մտադրությամբ, նրանց, որոնց սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, կամ նրանց, որոնց տիրապետողը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկումից տարբեր այլ պատճառներով:

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են հաշվապահական հաշվեկշռում այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների «կարգավորվող ձևի» գնումները հաշվառվում են ըստ վերջնահաշվարկի ամսաթվի մեթոդի:

Չափում

Ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է իրական արժեքով, գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռք բերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո տրամադրված փոխառությունները (վարկերը) և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելավճարները և գեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ներառված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, երբ ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրացել է կամ, երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները: Բոլոր իրավունքները կամ պարտավորությունները, որոնք առաջացել կամ պահպանվել են փոխանցման ժամանակ, ճանաչվում են առանձին որպես ակտիվներ կամ պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում է:

Ընկերությունը որոշ ակտիվներ ապաճանաչում է նաև այն դեպքում, երբ դուրս է գրում անհավաքագրելի ճանաչված ակտիվներին վերաբերող մնացորդները:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև՝ հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Հիմնական միջոցներ

Մեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայություն ունեցող հիմնական բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանն են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված հիմնական միջոցները ներկայացված են իրական արժեքից և վարձակալության սկզբում վարձակալության նվազագույն վճարների ներկա արժեքից նվազագույնով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Գործառնական վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանը չեն փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, ծախսագրվում է:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման հաջորդ ամսից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Սարքավորումներ	3-ից 5 տարի
Գույք	7-ից 20 տարի
Փոխադրամիջոցներ	7 տարի
Այլ հիմնական միջոցներ	5 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են ձեռք բերման արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների գծով ամորտիզացիան հաշվառվում է կիրառելով գծային մեթոդը վերջիններիս օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր	10 տարի
-----------------------	---------

Արժեզրկում

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հիմնականում ներառում են հաճախորդներին տրված վարկերը և բանկերում տեղաբաշխված միջոցները («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է վարկերը և դեբիտորական պարտքերն արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (դեպքերը) ազդեցություն ունի վարկի կամ դեբիտորական պարտքի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնց հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Նախևառաջ Ընկերությունը գնահատում է, արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի են և առանձին կամ միասին վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի չեն: Եթե Ընկերությունը որոշում է, որ արժեզրկման անկողմնակալ վկայություն առկա չէ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի համար, լինի այն զգալի թե ոչ, ապա այն այդ վարկը ներառում է պարտքային ռիսկի համանման բնութագիր ունեցող վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և միասին գնահատում է՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց գծով առանձին իրականացվել է արժեզրկման ուսումնասիրություն և որոնց գծով ճանաչվել են կամ շարունակվում են ճանաչվել արժեզրկման կորուստներ, ներառված չեն արժեզրկման ընդհանուր գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախնական վնասը, որոնց գծով ճշգրտումներ են կատարվել ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկման կորստի գումարը գնահատելու համար պահանջվող տեղեկատվությունը կարող է սահմանափակ լինել կամ այլևս ամբողջությամբ չհամապատասխանել ներկա հանգամանքներին: Սա կարող է լինել այն դեպքում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություններ ունի և Ընկերության տրամադրության տակ կան քիչ տվյալներ համանման վարկառուների մասին: Այս դեպքերում արժեզրկումից կորստի գումարն Ընկերությունը գնահատում է ելնելով իր փորձից ու դատողություններից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում է այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է այլ ոչ ֆինանսական ակտիվները՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերի և օգտագործման արժեքի առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը գեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող միավորները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը ցածր է այն հաշվեկշռային արժեքից, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Պահուստներ

Պահուստը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունը էական է, պահուստները որոշվում են, գեղչելով ակնկալվող դրամական հոսքերը, օգտագործելով գեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում, պարտականությանը բնորոշ ռիսկերը:

Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը ստանձնում է վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային գծեր և երաշխիքներ:

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են Ընկերության կողմից որոշակի վճարումների կատարումը պարտավորեցնող պայմանագրեր, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը և վարկային այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն, և այդ վնասը հնարավոր է արժանահավատորել չափել:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրության պահանջներով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում՝ հայտարարվելու ժամանակաշրջանում:

Հարկում

Շահույթի կամ վնասի գծով տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված տարրերին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմք ընդունելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունները: Ժամանակավոր տարբերություններ չեն սահմանվում հաշվապահական հաշվառման կամ հարկվող շահույթի վրա ազդեցություն չունեցող ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար: Հետաձգված հարկերի գումարը հիմնված է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող մեթոդի վրա՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Աշխատակիցների հատուցումներ

Ընկերությունը հատկացումներ է կատարում Հայաստանի կենսաթոշակային հիմնադրամին հոգուտ իր աշխատակիցների: Այդ հատկացումները ծախսագրվում են կատարվելու ժամանակ:

Եկամուտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրվելուն պես՝ հաշվի առնելով ակտիվի/պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը կամ կիրառելի լողացող տոկոսադրույքը: Տոկոսային եկամուտը և ծախսերը ներառում են գեղջի կամ հավելավճարի կամ տոկոսակիր գործիքի սկզբնական հաշվեկշռային արժեքի և մարման ենթակա գումարի միջև տարբերությունների ամորտիզացիան, որը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկի տրամադրման ու սպասարկման ծախսերը, ինչպես նաև այլ ծախսերը, որոնք համարվում են վարկի ընդհանուր եկամտաբերության անբաժանելի մասը, ուղղակի ծախսերի հետ մեկտեղ հանդիսանում են հետաձգված ծախսեր և ամորտիզացվում են մինչև տոկոսային եկամուտը՝ ֆինանսական գործիքի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վարձավճարներից և կոմիսիոն վճարներից ստացված եկամուտը ճանաչվում է համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

3 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտներ նոստրո հաշիվներից և ավանդներից	3,036	867
Տոկոսային եկամուտներ դրամական շուկայում ներդրումներից	-	-
Տոկոսային եկամուտներ վարկերից և այլ փոխառություններից	1,506,320	39,761
Տոկոսային եկամուտներ ներդրումներից	-	-
Այլ տոկոսային եկամուտներ	23,854	-
	1,533,210	40,628

4 Տոկոսային և նմանատիպ ծախսեր

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Տոկոսային ծախսեր դրամական շուկայի փոխառությունների դիմաց	(514,586)	(11,136)
Տոկոսային ծախսեր հաճախորդներից ստացված փոխառությունների դիմաց	-	-
Այլ տոկոսային ծախսեր	(7,978)	-
	(522,564)	(11,136)

5 Չուտ շահույթ/(վնաս) առևտրական նպատակներով պահվող ներդրումներից

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Չուտ շահույթ/(վնաս) առևտրական նպատակներով պահվող ներդրումների վաճառքից	-	-
Չուտ շահույթ/(վնաս) առևտրական նպատակներով պահվող ներդրումների վերագնահատումից	-	-
	-	-

6 Չուտ շահույթ/(վնաս) վաճառքի համար նախատեսված ներդրումներից

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Չուտ շահույթ/(վնաս) վաճառքի համար նախատեսված ներդրումների վաճառքից	-	-
Չուտ շահույթ/(վնաս) վաճառքի համար նախատեսված ներդրումների վերագնահատումից	-	-
	-	-

7 Չուտ շահույթ/(վնաս) արտարժույթով գործարքներից

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Չուտ շահույթ/(վնաս) արտարժույթի վաճառքից	13,113	(13,826)
Չուտ շահույթ/(վնաս) արտարժույթի վերագնահատումից	2,439	3,804
	15,552	(10,022)

8 Այլ գործառնական եկամուտ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	8,371	-
Ֆակտորինգից ստացված եկամուտներ	-	-
Արտասովոր եկամուտներ	-	-
Այլ եկամուտներ	3	4
	8,374	4

9 Վարկերի և այլ փոխառություններից առաջացած կորուստներ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Նոստրո հաշիվների և ավանդների գծով		
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված գուտ մասհանումներ	-	-
Վերջնական մնացորդ	-	-
Տեղաբաշխված վարկերի գծով		
Սկզբնական մնացորդ	(3,453)	-
Պահուստին կատարված գուտ մասհանումներ	(58,115)	(3,453)
Դուրս գրում	1,106	-
Վերջնական մնացորդ	(60,462)	(3,453)
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով		
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված գուտ մասհանումներ	-	-
Վերջնական մնացորդ	-	-
Գերխտորական պարտքերի և այլ ակտիվների գծով		
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված գուտ մասհանումներ	-	-
Վերջնական մնացորդ	-	-
Ընդամենը պահուստ ակտիվների գծով		
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված գուտ մասհանումներ	-	-
Վերջնական մնացորդ	-	-
Արտահաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով պահուստ		
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված գուտ մասհանումներ	-	-
Վերջնական մնացորդ	-	-
Ընդամենը պահուստ ակտիվների և արտահաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով		
Սկզբնական մնացորդ	(3,453)	-
Պահուստին կատարված գուտ մասհանումներ	(58,115)	(3,453)
Դուրս գրում	1,106	-
Վերջնական մնացորդ	(60,462)	(3,453)

10 Ընդհանուր վարչական ծախսեր

	2007թ.	2006թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Աշխատակիցների հատուցումներ	(135,617)	(42,711)
Վարձակալություն	(38,570)	(8,800)
Աշխատավարձին վերաբերող հարկեր	(11,426)	(3,183)
Մաշվածություն և ամորտիզացիա	(10,998)	(6,170)
Կապի և տեղեկատվական ծառայություններ	(9,158)	(2,071)
Մասնագիտական ծառայություններ	(8,717)	(5,183)
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	(3,539)	(1,276)
Վարկի գրանցման ծախսեր	(3,481)	-
Անվտանգության ծառայություն	(3,216)	(903)
Գրասենյակային ծախսեր	(2,889)	(696)
Գովազդ և շուկայավարում	(2,450)	(975)
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	(2,073)	(716)
Ներկայացուցչական ծախսեր	(2,072)	(1,763)
Գործուղման ծախսեր	(1,181)	(468)
Ապահովագրություն	(264)	-
Այլ	(6,220)	(1,178)
	(241,871)	(76,093)

11 Այլ գործառնական ծախսեր

	2007թ.	2006թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Վճարված տուգանքներ և տույժեր	(1,130)	-
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	-	-
Ֆակտորինգի գծով ծախսեր	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	-	-
Արտասովոր ծախսեր	-	-
Այլ ծախսեր	(5,383)	(959)
	(6,513)	(959)

12 Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	(120,342)	-
Հետաձգված հարկի գծով ծախս/(փոխհատուցում)		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(28,204)	8,167
Շահութահարկի գծով ընդհանուր ծախս/(փոխհատուցում) ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	(148,546)	8,167

Ընկերության ընթացիկ և հետաձգված հարկերի հանդեպ կիրառվող հարկի դրույքը կազմում է 20% (2006թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2007թ. հազ. դրամ	%	2006թ. հազ. դրամ	%
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	764,500		(56,630)	
Շահութահարկի հաշվարկ կիրառելի հարկային դրույքով	(152,900)	20	11,326	(20)
Չնվազեցվող (ծախսեր)/չհարկվող եկամուտ	4,354	(1)	(3,159)	6
	(148,546)	19	8,167	(14)

13 Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Կանխիկ դրամական միջոցներ և դրան հավասարեցված վճարային փաստաթղթեր		-
Նոստրո հաշիվներ բանկերում	65,770	49,227
Արժեզրկման գծով պահուստ	-	-
	65,770	49,227

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցների կենտրոնացում

2007թ. և 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն իր հաճախորդների շարքում ունեւր մեկ բանկ, որի մնացորդը գերազանցում էր բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2007թ. և 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում էր համապատասխանաբար 58,544 հազար դրամ և 38,223 հազար դրամ:

14 Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական նեղրումներ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր	-	-
Այլ երկրների պետական արժեթղթեր	-	-
Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	-	-
Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	-	-
Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	-	-
Ածանցյալ գործիքներ	-	-
Արժեզրկման գծով պահուստ	-	-
	-	-

15 Բանկերում տեղաբաշխված միջոցներ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Բանկերում ներդրված ավանդներ	-	-
Բանկերին տրված վարկեր և այլ փոխատվություններ	-	-
Արժեզրկման գծով պահուստ	-	-
	-	-

16 Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներ	-	-
Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և այլ փոխատվություններ	-	-
Արժեզրկման գծով պահուստ	-	-
	-	-

17 Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Առևտրային վարկեր		
Վարկեր խոշոր ձեռնարկություններին	4,051,291	535,755
Վարկեր փոքր և միջին չափի ձեռնարկություններին	2,581,997	518,902
Ընդամենը առևտրային վարկեր	6,633,288	1,054,657
Անհատներին տրված վարկեր		
Հիպոթեքային վարկեր	3,326,491	1,270,774
Սպառողական վարկեր	2,656,921	571,899
Ավտոմեքենայի գնման վարկեր	377,404	172,214
Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր	325,370	127,827
Անհատներին տրված ընդամենը վարկեր	6,686,186	2,142,714
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	13,319,474	3,197,371
Արժեզրկման գծով պահուստ	(60,462)	(3,453)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	13,259,012	3,193,918

Ստորև ներկայացված է վարկերի արժեզրկման գծով պահուստի շարժը 2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Արժեզրկման գծով պահուստի շարժի վերլուծություն

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբին/ժամանակաշրջանի սկզբում	3,453	-
Տարվա/ ժամանակաշրջանի զուտ ծախս	58,115	3,453
Դուրս գրումներ	(1,106)	-
Մնացորդը տարեվերջին	60,462	3,453

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկված վարկերի գծով հաշվեզրկված տոկոսները կազմեցին 8,582 հազար դրամ (31 դեկտեմբերի 2006թ.՝ գրո):

Առևտրային վարկերի գծով արժեզրկումը գնահատելիս Ընկերությունը հիմք է ընդունել արժեզրկված վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծությունը և արժեզրկման հայտանիշներն են չցուցաբերող վարկային պորտֆելների գծով վնաս կրելու նախկին ժամանակաշրջանների իր և շուկայի փորձը:

Առևտրային վարկերի համար արժեզրկման գծով պահուստը որոշելիս որպես հիմնական ենթադրություն դիտարկվել է նախորդ ժամանակաշրջանների վարկերի գծով կրած վնասի 0.3% դրույքը:

Այս գնահատումների փոփոխություններն ազդեցություն կունենան վարկի արժեզրկման գծով պահուստի վրա: Օրինակ՝ եթե դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գուտ ներկա արժեքը ավելանա մեկ տոկոսով, առևտրային վարկերի արժեզրկման գծով ընդհանուր պահուստի գումարը 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կավելանար 66,836 հազար դրամով:

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժն ըստ առևտրային վարկերի տեսակների 2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	Վարկեր խոշոր		Ընդամենը
	ձեռնարկություններին	Վարկեր փոքր և միջին չափի ձեռնարկություններին	
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Վարկի արժեզրկման գծով պահուստ առ 1 հունվարի	-	-	-
Վարկի արժեզրկումից կորուստներ տարվա ընթացքում	12,257	7, 791	20,048
Վարկի արժեզրկման գծով պահուստ առ 31 դեկտեմբերի	12,257	7,791	20,048

Անհատներին տրված վարկերի համար արժեզրկման գծով պահուստը որոշելիս որպես հիմնական ենթադրություն դիտարկվել է նախորդ ժամանակաշրջանների և շուկայի փորձը և ներառում է վարկերի գծով կրած վնասի հետևյալ դրույքները.

- Գրավով չապահովված սպառողական վարկեր - 1%
- Ավտոմեքենայի գնման վարկեր - 0.5%
- Հիպոթեքային վարկեր - 0.3%
- Անշարժ գույքով ապահովված սպառողական վարկեր - 0.5%
- Անշարժ գույքի ապահովվությամբ ժամկետանց վարկերի գծով ղեկավարությունը նախատեսում է 12 ամիս ուշացում՝ գրավի իրացումից հասույթ ստանալիս, որը չի փոխհատուցվի համապատասխան տոկոսային եկամուտով և սկզբնապես գնահատված արժեքի 20%-ի չափով գեղչով, եթե գրավադրված գույքը վաճառվի դատական ընթացակարգով:

Այս գնահատումների փոփոխություններն ազդեցություն կունենան վարկի արժեզրկման գծով պահուստի վրա: Օրինակ՝ եթե դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գուտ ներկա արժեքը ավելանա մեկ տոկոսով, անհատներին տրված վարկերի արժեզրկման գծով ընդհանուր պահուստի գումարը 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կավելանար 67,350 հազար դրամով:

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժն ըստ անհատներին տրված վարկերի տեսակների 2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	Սպառողական	Ավտոմեքենայի	Հիպոթեքային	Անշարժ գույքով	Ընդամենը
	վարկեր	զնման վարկեր	վարկեր	ապահովված սպառող. վարկեր	հազ. դրամ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Վարկի արժեզրկման գծով պահուստ առ 1 հունվարի	3,453	-	-	-	3,453
Տարվա ընթացքում դուրս գրված վարկեր	(1,106)	-	-	-	(1,106)
Վարկի արժեզրկումից կորուստներ տարվա ընթացքում	24,501	1,899	10,029	1,638	38,067
Վարկի արժեզրկման գծով պահուստ առ 31 դեկտեմբերի	26,848	1,899	10,029	1,638	40,414

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժն ըստ անհատներին տրված վարկերի տեսակների 2006թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	Սպառողական	Ավտոմեքենայի	Հիպոթեքային	Անշարժ գույքով	Ընդամենը
	վարկեր	զնման վարկեր	վարկեր	ապահովված սպառող. վարկեր	հազ. դրամ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Վարկի արժեզրկման գծով պահուստ առ 4 հուլիսի	-	-	-	-	-
Վարկի արժեզրկումից կորուստներ տարվա ընթացքում	3,453	-	-	-	3,453
Վարկի արժեզրկման գծով պահուստ առ 31 դեկտեմբերի	3,453	-	-	-	3,453

Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են տնտեսության հետևյալ ճյուղերում:

	2007թ.	2006թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Կոմերցիոն հաճախորդներ		
Շինարարություն	3,008,309	81,462
Առևտուր	2,670,533	746,948
Անշարժ գույք	380,976	-
Այլ	341,682	-
Տրասպորտ	147,286	63,350
Մշակում	43,560	162,897
Արտադրություն	40,942	-
Անհատներին տրված վարկեր	6,686,186	2,142,714
	13,319,474	3,211,701
Արժեզրկման գծով պահուստ	(60,462)	(3,453)
	13,259,012	3,208,248

Վարկային ռիսկին ենթարկվածություն

2007թ. և 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը միջոցներ էր տրամադրել կապակցված վարկառուների մեկ խմբի և երկու վարկառուի, որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում էին հաճախորդներին տրված ընդհանուր վարկերի 10%-ը: 2007թ. և 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր արժեքը կազմում էր համապատասխանաբար 1,938,666 հազար դրամ և 727,000 հազար դրամ:

Վարկերի ժամկետայնություն

